Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ծածկագրով բենզին ռեգուլյար ապրանքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.10.2022թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Գ. Հակոբյան
Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Լ. Խալաթովա

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետը eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում սահմանվել է մինչև 25.10.2022թ. ժամը 11:00-ն: Ընթացակարգի աճուրդը կայացել է eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 26.10.2022թ. ժամը 11:00-11:30-ը:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	<<ՖԼԵՇ>> ՍՊԸ	1 000 000	753 333.34	20 %	904 000	753 333.34	20 %	904 000
2	<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	1 000 000	768 333.34	20 %	922 000	768 333.34	20 %	922 000

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. Հայտի գնահատման և գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Տ. Ղուկասյան)

2.1. Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ Տ. Ղուկասյան

Անդամներ՝ _____ Կ. Բարսեղյան

_____ Գ. Հակոբյան

_____ Գ. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան